

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԲԵՐՈՅԵԱՆ ՎԻՃԵԿԸ:

Լեանքի շատ երեւոյթներ կան, որոնք մեր աչքից փախչում են. յաճախ լրագրի մէջ կարդում ենք մի քստմենքի ոճրագործութեան նկարագիրը. մեզ մօտ հարեւան գիւղում պատահած մի դէպք են պատմում՝ եւ այդ առթիւ տեղական բարքերի խիստ անմխիթար, երբեմն սարսափ ազդող պատկեր դնում մեր առաջ. փողոցից անցնելիս անպատկառ խօսքեր ենք լսում մի երեխայի կամ մի կնոջ բերանից, անվայել տեսարանների ենք ականատես լինում: Թոյլ ենք տալիս նոյն իսկ մեզ անվայել խօսք ասելու կամ անվայել գործ անելու: — Եւ այդ ամէնը անհետ անցնում է, մեզ վարժեցնում անվայելն ու անբարոյականը տեսնելու եւ անտարբեր մնալու՝ նայելու նոցա վերայ հաշտ աչքով, իբրեւ կեանքի սովորական եւ անհրաժեշտ երեւոյթների վերայ: Մինչդեռ եթէ մի քույր մեր մտքի ու մեր զգացումների մէջ խորասուզուէինք, աչքի առաջ բերէինք ու իրար մօտ դնէինք այն բոլորն, ինչ որ տեսել ու լսել ենք՝ մի ահաւոր տեսարան կըացուէր, եւ մենք սոսկալով պէտք է քացազանշէինք. այս ուր ենք գնում: Բարոյական անկումը մեծ է մեր ժողովրդի մէջ, գնալով օր աւուր աւելի մեծանում է, եւ առ այժմ՝ դժուար է նախատեսել, թէ ո՛ր եւ նո՞ր մի զօրութիւն պէտք է հանդէս կայ, որ այս դէպի անդունդ շրջող հոսանքի առաջը կանգնէ. դեռ չենք տեսնում հրապարակի վերայ գրեթէ ոչինչ, որ նորա դէմ մարտնչու ոյժ, կամ զոնէ հակումն ունենար:

Ինչպէս անհատի, այնպէս եւ իւրաքանչիւր հասարակութեան բարոյական վիճակը ամենամեծ կախումն ունի նորա բարոյական աշխարհայեցողութիւնից, ուստի մեր ժողո-

վրդի մէջ երեւան եկող քաղմաթիւ զեղծութեան արմատը գտնելու համար պէտք է հարցնենք նախ, թէ ի՞նչ է նորա առաջնորդող բարոյական գաղափարը: Կոյ՛ արդեօք այնպիսի մի գաղափար նորա համար, որ իրօք բարոյական բնաւորութիւն ունենար եւ ընդհանուրի առաջնորդող լինէր. — հազիւ թէ: Տասնեակ տարիներ առաջ (եւ այսօր եւս մի քանի արտաքին վատ ազդեցութիւններից ազատ մնացած խաւերում) եթէ հարցնէիք մէկին, թէ ինչո՞ւ այս ինչ բանը չէ անում: կատարաւանէր, թէ մեղք է. նա կարելի է պարզ հաշիւ տալ չէր կարողանայ, թէ ինչո՞ւ է մեղք, կամ ինչո՞ւ մեղք համարուածը չպէտք է անել կարելի է նաեւ, որ նորա այդ գիտակցութեան հիմունքները զուտ բարոյական չէին լինի. այնու ամենայնիւ նորա համար մի որոշ սրբութիւն կար, որին նա չէր համարձակուի ծեղք տալ. կային որոշ պատուէրներ, որ պարտաւոր էր համարում իրեն կատարել, եւ ուրեմն մի որոշ չափ ունէր բարոյականն ու անբարոյականը տարբերելու՝ մէկին հետեւելու եւ միւրը խոտելու: Այսօր այդպէս չէ. «Ի՞նչ մեղք, ի՞նչ բան» դարձուածը դուք կըլսէք այսօր գրեթէ ամէն դասակարգի մարդոց բերանից, եւ դժբաղդաբար սուտ է ըստ մեծի մասին, եթէ շատերը կախնեն, որ մեղք չհամարելով այլեւս գոհնիկ ժողովրդի այդպէս անուանած մի շարք բաներ՝ փոխարէնն իրենք ուրիշ բարոյական սկզբունքներ ունին, որ նոցա համար սուրը են. գործնական կեանքի մէջ այդ սկզբունքների գործադրութիւնը շատ քիչ է երեւում:

Մի սկզբունք կայ, որ յիշաւ շատ ընդարձակ գործադրութիւն է գտել ներկայումս մեր ժողովրդի կեանքում եւ որին քիչ է մնացել արդէն ամէնքն առանց քացառութեան հպատակ գրուին ու կեանքի միակ նշանաբան հրատարակեն. այդ անձնական շահի սկզբունքն է, հարստանալու բուռն տենչով արտայայտուած: Որ ամէն մարդ իր շահի համար է աշխատում՝ աշխարհիս երեսին եւ իրաւունք ունի ծեղքից եկած բոլոր միջոցներով իր շահը յառաջ վարել՝ այդ հայեացքն այնչափ է ընդհանրացել եւ ակներեւ ճշմարտութիւն դարձել ոչ միայն հասարակ ամբո-

խի այլ նաև կրթուած զարգացած մարդոց աչքում: որ ձեռք խաղերայ կամ՝ ցնորամիտ են համարում՝ շատ անգամ՝ եթէ հակառակ հայեացք պաշտպանէք: Ամէները շահի ետեւից են ընկած: ուրիշ խօսքով ամէները հարստանալ կամ՝ ամենադիւրին ճանապարհաւ քարեկեցիկ կեանք ունենալ են ուզում: Թուում է թէ քացառութիւն չկայ ամենեւին, եւ նորա, որոնք ըստ երեւութին ուրիշ զաղափարով են առաջնորդուում՝ կամ՝ կոչումով եւ շրջապատող պայմաններով կեանքի աւելի զաղափարական ընթացքի մէջ են դրուած՝ իրենց են խաբում՝ կամ՝ ուրիշներին: Երբայի այս եւստիրական կամ՝ նիւթապաշտական աշխարհայայցողութեան ծնշման ներքոյ ամէներս գտնուում ենք աւելի կամ՝ պակաս չափով: եւ եթէ լրջօրէն մեզ ու մեր մերձաւորներին բնենք, կտեսնենք, որ մեր հակառակ համոզման չնայած, ինքներս մեր վարմունքով, մեր խօսքի եւ արտայայտութեան ձեւերով, մեր անգիտակցօրէն համակերպուելով տիրող հոսանքին՝ նպաստում ենք նորա զօրանալուն եւ տարածուելուն: Մեր ականջին շարունակ քարոզում են, որ բոլոր մարդիկ փողի համար են աշխատում եւ փողն ամէն ինչ է աշխարհիս վերայ: իսկ մենք ո՛չ մի միջոց չունենք կամ՝ գործ չենք դնում՝ այդ հայեացքի ծշմարտութիւնը հերքելու: Եւ նա գնալով ընդհանրանում, ահագին բեռն է դառնում՝ ժամանակակից հասարակութեան քարոյական գիտակցութեան վերայ: որի ծանրութիւնը եթէ խիստ զգալի չէ կեանքի սովորական պայմաններում՝ անչափ զգալի է դարձել արդէն այնպիսի տեղեր, ուր արտաքոյ կարգի պայմաններ են ստեղծուած:

Առէք այն քաղաքը, որ մեր երկրի հարստութեան գլխաւոր կեդրոնն է այսօր: Ինչ գնով են արդեօք իրար վերայ դիզուում միլիոնները Բագում՝ եւ ի՞նչ արդիւնք են յառաջ բերում՝ մեր ժողովրդի համար: Հարիւրներով ու հազարներով հատարակութեան ամենամիջ, եռանդուն, գործունեայ անդամներ իւրաքանչիւր տարի մեր երկրի ամէն կողմերից այդ քաղաքն են դիմում: կարելի է ասել այն ամէներ, ինչ որ մի քանի տասնեակ տարիներ ընթացքում մեր նորաքողքը դարձնելու

քաղաքակրթութեան այլ գործօնները արտադրել են՝ մեծագոյն չափով ժողովուած է Բագում՝ — հարստութիւն ժողովելու համար: Հարկաւ շատերն այստեղ գալիս ազնիւ դիտումներ են ունենում: մի խեղճ ընտանիք նիւթական նեղ դրութիւնից հանելու յոյսը կամ՝ սեփական ուժերի ճարտարութեան համար գործադրութեան ընդարձակ ասպարէզ գտնելու եռանդն է նոցա դեկավարում: շատերը մտածում են թէ նախքան մերի մէջ առ ժամանակ շարքաւ կեանք վարելով՝ մի անդորը ապագայ կապահովին իրենց համար եւ ապա մի խաղաղ անկիւն քաշուած իրրեւ ազնիւ աշխատատեղ քաղաքացի կապեն: Բայց քանի քանի այսպիսի ազնիւ դիտումներ խեղդում մնում են նախքան մերի մէջ: Մի միջոցով, ուր բոլոր մարդիկ միատեսակ նիւթական պրամական հաշիւներով են զբաղուած, ուր կարծես կեանքի ուրիշ ոչ մի խորհուրդ չկայ, քայց եթէ անվերջ կերպով հարստութիւն հարստութեան վերայ աւելացնել ամէնից մաքուր եւ անշահախնդիր հոգիների վերայ եւս սեւ դրոշմ՝ դնել եւ զաղափարական ձգտումների համար անընդունակ դարձնել կարող է: Ամենօրեայ փորձերը կամաց կամաց համոզում են սոցա, որ տիեզերքը կառավարողը ոսկէ կուռքն է: եւ որ ուրեմն սոցա համար եւս միակ ճանապարհը դէպի քերթադրութիւն այդ կուռքին երկրպագութիւն մատուցանելն է. եւ ըստական է որ պօքր ինչ վարժութիւն ձեռք բերեն այս նոր պաշտամունքի մէջ, այնուհետեւ բոլոր միասնորութիւնները դադարում են սրբութիւն՝ զօրութիւնները զօրութիւն լինելուց, քարոյական անկումս անխուսափելի է:

Ինչպիսի՞ն օարտափելի անկման կարող է հասնել մարդ, երբ նիւթական շահից եւ նորանով ձեռք բերուող վայելքից դուրս կեանքի ուրիշ նպատակ չէ տեսնում՝ պժուար է երեւակայել: եւ այդպիսի աներեւակայելի անկման պատմութիւններ շատ են անում այսօր թէ Բագուի եւ թէ առհասարակ այն բոլոր տեղերի հայրի մասին, որոնց մէջ բոյն է դրել նիւթապաշտական ոգին: Մենք մի նախորդ յօդուածով կրօնի տկարանալն էինք իրրեւ քարոյական անկման պատճառ ցոյց

տուել. եթէ որոններ, ուրիշ շատերն էլ կը գտնենք, եւ նոքա բոլորեքեան շատ սերտ կապ ունին միմեանց հետ: Անտեղի է ընդունել, թէ քարոյականութիւնը զարգանում է ինքնուրոյն կերպով, անկախ արտաքին դրդիչներից. ընդհակառակն այն ամէնը, ինչ որ քարի է կամ չար, լաւ կամ վատ մեր անծի համար՝ ազդեցութիւն ունի անպատճառ մեր քարոյականութեան վերայ. մենք կատարեալ քարոյական ծանաշողութիւն ունինք այն ժամանակ միայն, երբ քարոյական պահանջն ու մեր անծի քարին նոյնանում՝ եւ մեր աշքում այսինքն լաւ համարում ենք մեզ համար այն միայն, ինչ որ քարոյական է: Այդպիսի քարոյական գաղափար տալիս է մեզ քրիստոնէութիւնը, որ սովորեցնում է, թէ յաւիտենական քարին՝ կատարեալ քարին ձեռք բերել կարելի է միայն քարի գործելով կամ քարոյական լինելով. իսկ քարոյական լինելու եւ քարի գործելու համար՝ ամէն քայլափոխում անձնագործութիւն է պահանջուում, պահանջուում է զրկել իրան անձնական ընկերական վայելքից: Կատարեալ անձնութեան թիւն եւ կատարեալ անձնապաշտութիւն երկու հակադիր կէտեր են: որոնց մէջ շատ աստիճանաւորութիւններ կան, եւ նայելով ո՞ր կողմն է գերակշռում, ըստ այնմ եւ աւելանում կամ ընկնում է մարդու քարոյական արժէքը:

Մեր հայերը հարկաւ ըստ ամենայնի կատարեալ քրիստոնեաներ չէին, քայց քրիստոնէութեան իրենց առաջ դրած քարոյական պահանջների գոնէ մի որոշ շափը պարտաւոր էին զգում՝ իրենց սրբութեամբ կատարելու, եւ այդ զգացումը կրթում էր նոցա քարոյապէս, վարժեցնում չափաւորութեան, ստիպում մարմնոյ ցանկութիւնները զսպել եւ հոգին զօրացնել: Այժմ, երբ այդ զգացումը շատերի մէջ վերացել է եւ չկայ նման մէկը, որ տեղը ընէ՝ ընականաբար ասիացի մարդու բուն կրքերը սանձարձակ ազատութիւն կգտնեն, եւ վայ եթէ նա նիւթական առատ միջոցներ եւս ունի իւր կրքերին բաւականութիւն տալու:— Ինչպէս կարելի է այս դրութիւնը քարեփոխել եւ շարեաց մեծանալուն արգելք լինել. հարկաւ կրկին քարոյա-

կան ծանաշողութիւն զարգացնելով: Կատարեալ չլինելով մարդոց դէպի վսեմս ու գաղափարականը եւ նիւթի ոչնչութիւնը պարզելով նոցա առաջ: Առանց գաղափարի, առանց իշխանի մարդ ապրել չի կարող. նիւթական վայելքները առ ժամանակ միայն կշլացնեն եւ ով բոլորովին զուրկ չէ քարոյական զգացումից՝ շուտով պէտք է տեսնէ, թէ նիւթականին անձնատուր լինելով դէպի անխուսափելի կորուստ է դիմում: եւ պէտք է հոգոյ մէջ մի դատարկութիւն զգայ, որ աշխարհի բոլոր վայելքներով լեցնել չի կարելի, այլ որ քարոյական բովանդակութիւն է պահանջում: Այդ բովանդակութիւնը հասցնել ժամանակին, երբ պահանջ կայ ամենամեծ քարիք անել կնշանակէ անհատին: ինչպէս եւ հասարակութեան: Մեր ժողովուրդը եթէ դեռ կատարելապէս չէ զգում այդպիսի պահանջ՝ շուտով կզգայ անշուշտ եւ մենք պէտք է պատրաստ գտնուինք նորան քաւականութիւն տալու: Կան ի հարկէ կողմնակի ազդեցիկ միջոցներ էլ, որոնցով նիւթականի զօրութիւնը ջլատել եւ քարոյականի համար ծանապարհ բանալ կարելի է. այդպէս՝ պէտք է աշխատել, որ ոսկին կուր չդառնայ երբէք, այլ գործադրութեան մէջ լինի, եւ այն՝ կեանքի համար անմիջական նշանակութիւն ունեցող պիտոյքների մէջ, որպէս զի մարդիկ սովորեն ծառայական վիճակում տեսնել այն, ձեռքի կեղտ համարել եւ չյափշտակուել նորա երեւակայական զօրութիւնով: Պէտք է առհասարակ նիւթական մեծութիւնների առաջ չխոնարհել եւ առանց նոցա կարելորդութիւնն ուրանալու ամէն շարժումով ապացուցանել, որ նոցա նշանակութիւնն իսկական կեանքի համար երկրորդական է: Սակայն գլխաւորն այն է միշտ, որ քարոյականի եւ գաղափարականի ձգտումը կենդանի պահուի ժողովրդի մէջ, զոնէ յանձին նորա լաւագոյն գաւալների հանդէս զայ քարոյական գեղեցկութիւնը անբարոյականութեան զարշափի հանդէպ: Եւ այդ կլինի, երբ քրիստոնէութիւնը կենդանի քարոյականութեան կրօնը վերականգնանանայ մեր մէջ:

